




ԲՆԱՌՈՐՈՌԵԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ

Ի Ն Ք Ի Ա Հ Ա Ճ Ո Ւ Թ Ի Ի Ն



Պնքնահաճութեան զգացումը
ըստ գիտնական Ցիլերի անբնա-
կան մտքեր՝ գաղտփարներ են,
որոնք մանուկ հասակից մարդու
սրտի մէջ մտնելով ժանանակի
ընթացքում հետզհետէ աճում,
զարգանում են: Ինքնահաճու-
թիւնը մարդկային ազգի ամենա-
տգեղ և վնասակար լատկու-
թիւններից մէկն է: Ինքնահաճ
անհատը իւր գործերով, խօսակ-
ցութեամբ և մտաւոր հասկացողութեամբ չի ցանկա-
նում նշանակութիւն տալ ուրիշների լալտնած կարծեք»

ներին և խելօք սկզբունքներին, այլ անում է այնպէս, ինչպէս ինքն է կամենում։ Ինքնահաճութեան գաղափարը շատ անգամ ժառանգաբար սերունդից սերունդ է անցնում և ամենահաստատօրէն ապացուցուած է, որ ինքնահաճ ծնողների զաւակներն ըստ մեծի մասին ինքնահաճ են լինում։ Այդ վնասակար յատկութիւնն աւելի նկատում է հիւանդ քան թէ առողջ երեխաների մէջ և դորա հիմքը չպէտք է որոնել նոցա հիւանդութիւնների մէջ, այլ անդադար այն ներողամբ տութեան և այն զիջողութեան, որ ծնողները գործ են գնում իրանց հիւանդ երեխաների վերաբերեալ՝ կատարելով նոցա ամեն պահանջը ու ցանկութիւնը։ Ինքնահաճ երեխաները միշտ և ամեն ժամանակ ձգտում են, որ անպատճառ իրանց կամքը կատարուի։

Հստ Զալցմանի, երեխաները ինքնահաճ են լինում և այն գէպքում, երբ դաստիարակները և ծնողները անկարող են լինում նոցա հոգեկան և մարմնական պահանջներին գոհացումն տալ. ահա այսպիսի գէպքերում դիմում են մի այլ միջոցի՝ սկսում են դռալով, բղաւելով, լալով իրանց կամքը կատարած տեսնել, որով կամակորութեան ու ինքնահաճութեան հիմք են պատրաստում։ Ինքնահաճութեան այդ վնասակար և տգեղ սերմերը մանկան սրտի մէջ ցանում է մալրը հէնց օրորոցից։ Որպէս զի ալդ վատ յատկութիւնը գոյլութիւն չունենալ մի որ և է անհատի կամ ընտանիքի մէջ, հէնց մանուկ հասակից պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել տնալին դաստիարակութեան վերայ և զօրաւոր ու խելացի միջոցներով տեղն ու տեղը արմատախիլ անել այն բոլոր վնասակար ուղղութիւնները, որոնք մուտք են գործում նոցա սրտի և բնաւորութեան մէջ։ Գերդաստանի մէջ մալրն է այն հեղինակաւոր անձն, որ իւր աշալուրջ խնամատար ընթացքով, սի-

ըալիք ու քնքոլշ վարուեցողութեամբ պէտք է ձգտի
վատ անօդտակար յատկութեանց առաջն առնել և նո-
ցա տեղ լաւ, գեղեցիկ և օգտակար սկզբունքներ զար-
թեցնել իր մատաղ զաւտկների պարարտ սրտերի մէջ:
Ինքնահաճը ոչ մի ժամանակ ինքն իրան իւր ամբողջ
գործերով և էութեամբ միացած և ներդաշնակ չէ ըն-
թանում կեանքի մէջ, ուլ ամեն մի երեսով, գեղք,
գործ, խօստկցութիւն նրա աչքին ծուռ և հակառակ
և վատ են երեսում: Այդպիսի վատ հակումով օժտուած
մարդը թէ իւր ընտանիքում, թէ ընկերական շրջա-
նում և թէ հասարակութեան մէջ իւր ամբողջ կազմով
և ձգտումներով մի վալրենի, բարբարոս գազան է հան-
գիսանում: Վայ այն ծնողին, որի որդիքը ինքնահաճու-
թեան տգեղ գաղափարներով են լցուած. վայ այն մար-
դուն, որի կինը ինքնահաճ է և յամառ և ընդհակա-
ռակը. վայ այն կնոջը, որի ամուսինը ինքնահաճ է:
Ինքնահաճ ծնողաց որդիքը մի փոքր մեծանալուց յե-
տույ ընտանեկան օջախից դուրս գալով մտնում են դըպ-
ըոցական կեանքի մէջ, ուստի դպրոցի և նրա աշալուրջ
ուսուցիչների ու դաստիարակների վերալ մի ծանր և
սրբազան բեռն է աւելանում, մանուկների այդ ան-
կեղծ, քրտնաշան մշակները իրանց ամբողջ ոլժը պէտք
է դարձնեն երեխալոց մտաւոր, բարոյական, ֆիզիքա-
կան կրթութեան վերալ և աշխատեն մրցել, զօրաւոր
կուիւ մղել նոցա սրտերի մէջ բուն դրած այն վնասա-
կար երեսովների դէմ, որոնք նոքա իրանց հալրենի
տնից դպրոց են բերել: Այսպիսի ծանր հանգամանքնե-
րամ իրանց գործը և կոչումը այն դաստիարակներն են
լաջողութեամբ կատարում, որոնք իրանց խելքով և
հեղինակութեամբ միշտ բարձր են պահում աշակերտ-
ների առաջ և իրանց լաւ կառավարելու ընդռւնակու-
թեամբ աշխատում են իրանց սաներին կրթելով հան-

գերձ արմատախիլ անել նոցա մէջ գոյութիւն ունեցող լամառութիւնը և ինքնահաճութիւնը։ Դպրոցի զօրաւոր կամքը, ոլժը նրանում պէտք է կալանալ, որ նա ի նկատի առնելով մարդուս կրթութեան գլխաւոր նը-պատակը, աշխատի տմենայն խելամտութեամբ ու զգու-շութեամբ ոչնչացնել մանուկների սրտից եսական, ինք-նահաճ, լամառ և ուրիշ շատ վնասակար լատկութիւն-ները և գոյտ տեղ պատուաստել միահամուռ սիրոյ, համերաշխութեան և դէպի բարին ու վսեմը առաջնոր-դող գեղեցիկ սկզբունքները։

II

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՃԱՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Անձնասիրութեան գաղափարը, ծագումը, նրա ա-ռաջ քերած երեսոյթները եւ դարմանը։

Դերմանական նշանաւոր մանկավարժ Շվարցը (1766 – 1837) առաջին դպրոցական ուսուցիչն էր, որ լանձն առաւ ամենայն սիրով գրելու «մանկավարժական օգնութիւն» կամ աւելի լաւ է ասել «մանկավարժական ազդաբարը»։ Յարգելի մանկավարժը իւր այդ մեծ և նը-շանաւոր գործի մէջ ասում է. «ինչպէս որ բանական մարդը երբ աշխարհ է դալիս և նրա մէջ նկատում է մի ներքին շարժում, լուզում, որը իւր մէջ պարունակում է չարութեան ոգի և այդ վնասակար գաղափարը ար-մատախիլ անելու, ոչնչացնելու համար կարիք է զգաց-ւում զօրաւոր գեղի՝ լուրջ խնամատարութեան և հո-գացողութեան, այնպէս էլ մարդկալին ազգի մէջ երե-ւացած չար և վնասակար գաղափարները ջնջելու և նո-ցա տեղ արդարութեան, ճշմարտութեան, ազնուութեան

սկզբունքներ թագաւորեցնելու համար մեծ պահանջ է զգացում մանկավարժական մի օգնութեան, օժանդակութեան, որը խկապէս պէտք է մանկավարժութեան և դաստիարակութեան գործի ամենազլիսաւոր և էական մասը կազմէ։ Խելացի և զօրաւոր դաստիարակութեան ու կանոնաւոր լուրջ կրթութեան միջոցով կարելի է մարդկութեան անքաղաքավարի անդամներին քաղաքավարութեան հրաւիրել, կրթել և նոցա սրտի ու հոգու մէջ թագնուած չարութեան, ինքնասիրութեան և շահասիրութեան բոլոր սերմերը, գաղափարները արտաքին գրգռման միջոցով երևան հանել և անհրաժեշտ գաղափարն գտնելով բուժել։

Անկիրթ երեխաներն ըստ մեծի մասին ունին իրանց մէջ մի որոշ կազմակերպուած ամուր ինքնակամութիւնն և ալդպիսիները որպէս վատ զգացում ունեցողներ շատ անդամ միմեանց բարկացնում, ծաղրում, հայհոլում, անհանգիստ անում, խփում են և իրանց ալդ ընթացքով ցոյց տալիս, որ իրանք ոլժ, իրաւունք ունին։ Յաճախ վէճերի, կռիւների և խաղերի խանգարման ժամանակ հանդիսանում են որպէս չարութեան, քէն ու ոխի, վրէժխնդրութեան, նենգամտութեան, խարդախութեան, անձնասիրութեան, շահասիրութեան բարեկամներ և նոքա ալդ վնասակար ու վատ յարկութիւնները ձեռք են բերում իրանց շրջապատողների անբարեկամ, եսասէր և բարբարոս ընթացքից։ Եւ ալսպէս արմատանում է նոցա բնաւորութեան և հոգու մէջ իրանց շրջանում կատարուած ամեն մի տգեղ ու վնասակար երևոյթ, խօսակցութիւն և ալն։

Ալդ սերունդ փչացնող վնասակար ուղղութեան առաջն առնելու համար պէտք է շատ քաղցր, բարեկամական քնքոյշ հոգացողութեամբ ու զգուշութեամբ աշխատել նոցա սրտի մէջ սերմանել արդարութեան,

ճշմարտութեան, բարութեան ազնւութեան գաղափար-ները և ընկերական զանազան օդտաւէտ խաղերի միջոցով նոցա ճանտչեցնել տալ ընկերների շրջանը, կեանքը, ուր արդարութիւն, հաւասարութիւն, սէր և միահամուռ ընկերութիւն է տիրում, ուր բոլորը միմեանց վերալ հաւասար աչքով են նայում, աշխատում են իրար ծառալել և բոլորի սրտերում եսասիրութեան, շահսիրութեան տեղ տնկեղծ սէր և բուն ընկերական եսասիրութեան ոգի է թագաւորում բոլորի սրտերում:

Գերմանացի համաշխարհալին գիտնական կանար ինքնասիրութեան մասին ասում է. «Դեռ այն օրուանից առաջ, երբ երեխան նոր է սկսում բառեր արտասանել, դեռ այդ օրից շաբաթներ առաջ նրա մէջ արդէն կազմուած է եղել իւր սիլելի եսը, որը անձնասիրութեան համար ծառալում է որպէս աղօտ երևոյթ և ապա ժամանակի ընթացքում ձգտում է զանազան աղջուկներով, գոռում գոյզումով, իւր ցանկութիւնները անսաելի քաջութեամբ, կամակորութեամբ ու լամառութեամբ առաջ տանել»:

Այստեղ կամալ ակամալ հարց է զարթնում. ուրեմն ի՞նչ է եսասիրութիւնը կամ ինքնասիրութիւնը: Պրասէր գիտնականը ինքնասիրութիւն բառի մէջ հասկանում է, «Որ դա մի անձի ընտածին ջանքը, եռանդն է, որ աշխատում է ամենալն եռանդով մի ուրիշի եսին իր միահեծան հպատակութեան տակ բերելով՝ իշխել, տիրել նրան. ալսպիսի ընթացքը ոչ թէ միայն մի սխալ վրիպումն է դէպի մարդիկ, այլ և կատարեալ մեղանչումն դէպի ալն բացարձակ արդարութիւն և սէր քարողող Տէրը, որը Աստուած վեհ անունն է կըում»: Իսկ Ներքարտը ինքնասիրութեան անուանում է. «Մի ոչինչ կէտ՝ զերօ-եսի»:

Ինքնասիրութիւն բառի վերաբերեալ «Զանդերի».

բառարանի մէջ կայ մի բնորոշ վկալութիւն «ով մարդ, եթէ դու քո ինքնասիրութեան մէջ ապրելով գոհ ես կեանքիցդ, միայնակ ես մնալու աշխարհիս վերար»։ Ինքնասիրութեան զգացումը երեխալի մէջ առաջ է բերում ազատ գործելու և իշխելու ոգի։ այդ իսկ պատճառով մանկան ընդհանուր հոգեկան կեանքի մէջ առաջ է հանում մերկ եսականութիւնը իւր վատ ու սուր կողմերով։

Բոլոր լայտնի ու փորձուած մանկավարժները համաբեա կարելի է ասել միաձայն այն կարծիքն են լայտնում, որ ինքնասիրութիւնը—եսասիրութիւնը մարդկային ազգի կեանքի բնական և հիմնական նշանն է։

Մարդուս մէջ բնութիւնից կայ մի անվնաս զգացմունք, որը ձգտում է նրան տանելու ազատութեան, երջանկութեան, թշուառութեան։

Այդ բնական եսասիրութիւնը, որը լայտնի է որ պէս վնասող մարդկային բնաւորութեան, դրան մենք պատահում ենք մանկական հասակում ամեն տեղ։ և որքան մարդս մեծանում, գիտութիւն է ձեռք բերում, նոյնքան նրա մէջ գոյսւթիւն ունեցող եսասիրութեան տգեղ զգացմունքը տեղի է տալիս աւելի լայն ընկերական և համամարդկային հաւասարութեան զգացմունքի։

Եթէ որ մի երեխալ իւր կեանքի ընթացքում տտնջելով կենդանիներին ուրախութեամբ խանգարում է նոցա կեանքը և առանց խղճահարուելու դիտում է իւր շուրջը կատարուած անդիմութիւնները, այն ժամանակ այդպիսի երեխաները մեծանալով նոյն անտարբերութեամբ կնայեն մարդկային ազգի տանջանաց ամենաեսակ երեսութների վերալ և այդպիսին գնալով իւր այդ վնասակար ու անդութ ընթացքի մէջ աւելի լառաջադիմութեան քալչեր է ցոյց տալիս և սառ-

նարիւն անտարբերութեամբ է նալում մարդկալին ազգի տանջանաց վերայ:

Ահա այսպիսի տիսուր և սրտաճմլիկ ըուպէներում ճշմարիտ և կանոնաւոր կրթութիւնը, դաստիարակութիւնը ունի իւր մեծ և պատասխանատու դերը կատարելու և ցոյց տալու, որ երեխաները, այդ քնքով արարածները երբէք չպէտքէ անտարբերութեամբ դիտեն ուրիշների կրած չարչարանքները, տանջանքները, վըշտերը, ցաւերը և առանց մասնակից լինելու նոցա զըշտերին պղատոնական սառնարիւնութեամբ նայեն և թռուցիկ ակնարկ ձգելով անցնեն հեռանան: Գեղեցիկ և խելացի դաստիարակութեամբ պէտք է աշխատել երեխալի ժարմ և կենդանի զգացմունքը ուրիշների ցաւերի, վշտերի ուրախութիւնների համար զարթեցնել, կենդանի պահել. պէտք է ձգտել նրա վատ երեակալութիւնը, լիշողութիւնը օգնութեան կոչել, որպէս զի գիտակցօրին իրեն հասկանալով կարողանալ ուրիշների գրութեան մէջ մտնել: Ճշմարիտ և անկեղծ դաստիարակը պէտք է աշխատի իւր ամբողջ ոլժերը և ջանքերը ի մի ամփոփելով իւր սաների սրտի և մտքի մէջ բուն գրած եսասիրութեան վնասակար սկզբունքները արմատախիլ անելով խնամք տանել նրա սրտի մէջ ընդհանրութեան, եղբայրսիրութիւն վսեմ զգացմունքներ պատուաստել և մեծահոգի կրթել: Պոլմէրը ասում է. «Եթէ մանկան ծննդից ծնողները, դպրոցը և կամ դաստիարակները աշխատեն իրենց անհասկացողութեան ու թռուլութեան շնորհիւ կուռք գարձնել, եթէ նրա ամեն մի հաճոյքին բաւարարութիւն, գոհացում տրուի և եթէ նրա ամեն մի ինքնակամ ցանկութեան հետ համաձայնուեն.... այն ժամանակ ալդպիսի ծնողները, դաստիարակները և դպրոցը իրանց ամբողջ էութեամբ ոչ այլ ինչ են սերկալացնելու, եթէ ոչ եսասիրութեան,

շահասիրութեան մի մեծ բով, որի տուած պտուղները ամենից աւելի դառն ու անբուժելի են լինում ծնողաց համար»:

III

**ՃՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆ, ԿԵՂԾԱԿՈՐՈՒԹԻՒՆ, ԴԻՄԱԿԱՒՈ-
ՐՈՒԹԻՒՆ**

Նողոքորթը անուանում է այն անհատը, որը գործում և աշխատում է միայն այնպիսի տեղ, ուր կարող է իր արածը ակնպայտնի տեսնել, որտեղ իրան փաղքշում են և որտեղ նա աւելի միջոց ու վստահութիւն ունի ուրիշների առաջ քծնելու։ Նողոքորթ անձը ամենուրեք և ամենքի առաջ իւր իսկական գոլն լինելը ձգտում է ծածկել, կեղծել և աշխատում է իր շրջապատող մարդկանց հետ կեղծաւորաբար վարուել, ճշմարիտ կատարուած իրողութեանը վատ կերպարանք տալ և ամեն մի երնոյթ, գործ, ընթացք անբնականութեան սահմանին հասցնել։ Նողոքորթութեան վատ ու տգեղ զգացմունքի հետ ըստ մեծի մասին կապակցութեան մէջ են դիմակաւորութեան, ստախօսութեան, անարդարութեան և կեղծաւորութեան վնասակար զգացմունքները։ Բանական մարդը, որ դատելու, մտածելու և վիճելու ընդունակութիւն ունի, կեղծաւորութեան միջոցով փոխելով իւր իսկական էութիւնը, աշխատում է զանազան աններելի և շինծու խօսքերով, անբնական ձեւերով մի անհատի դէպի իրան դարձնել, գրաւել և ալդպիսի անձերը այլ և այլ հեղինակութիւն ունեցող մարդկանցից ակնածելով ամեն ջանք գործ են դնում իրանց սիրալիր, լաւ, առաքինի և աւելի արդարադատ-

ներկայացնել քան թէ իրանք իսկապէս կան. տեն-
չանօք ուրիշներին դուր և հաճելի լինելու՝ ալ
ձեռվ է խօսում, գործում և ցոյց տալիս քան թէ ինքը
մտածում է: Կարճ ասած արդարիսի տգեղ յատկութիւն-
ներ ունեցող անհատը իր կեանքի, գործունէութեան
ու խօսքերի մէջ դիմակաւորեալ երեալով աշխատում է
իր շրջապատողներին ցոյց տալ, որ ոչինչ չի եղել և
ամեն բան կեղծ գոյներով են ներկայացնում: Իսկ դիմա-
կաւորութիւնն է մի երեսով այն փոփոխութիւնը, որը
իսկական անձին պարզութեամբ չէ ցոյց տալիս ալնպէս՝
որպէս է և կալ, ալ փոփոխուած և դիմակաւորուած:

Մարդկալին ազգի ալս և սրա նման բոլոր պակա-
սութիւնները նրա բնաւորութեանն են պատկանում և
ըստ մեծի մասին առաջ են գալիս ստախօսութիւնից
և ապա կազմում են առանձին առանձին պակասութիւն-
ներ: Կան մարդիկ, որոնք բնութիւնից ունին մի առան-
ձին տենչանք, ցանկութիւն, հակումն դէպի փաղաքշու-
թիւն, քննութիւն, շողոքորթութիւն, կեղծաւորու-
թիւն... իսկ կան ոմանք, որոնք այդ պակասութիւննե-
րը տեսնում և սովորում են իրանց ծնողներից և կամ
իրանց շրջանի մարդիկներից: Եւ ալս երկու դէպքերում
ևս այդ երեսով ները իրանց էութեամբ և վատ կողմե-
րով մարդկալին կեանքի համար երեսում են որպէս վնա-
սակար թոյներ: Ալդպիսի յատկութեանց ոչնչացման վե-
րայ պէտք է սկզբեց ուշք դարձնել, ապա թէ ոչ որոշ
շրջան անցնելուց լետոյ ուղղել և բուժելը անհնարին
կ'լինի: Խելացի ծնողների և բարեխիղճ դաստիարակնե-
րի ազնիւ դիրքը, աշխատանքը և միակ ձգտումը պի-
տի այն բանի վերալ կենդրոնանան, որ աշալը ութեամբ
աշխատեն իրանց զաւակների մէջ բուն դրուած այդ
վնասակար և անպատուաբեր չարիքները խորտակել, ոչն-
չացնել և արմատախիլ անել: Ծնողները և դաստիարակ-

ները պէտք է խիստ ուշադրութիւն դարձնեն, որ ի-
րանց ձեռքի տակ գտնուած մատաղ և անփորձ երեխա-
ները մեծերի առաջ մեծ իրաւունքներ ցոլց չտան, սան-
ձարձակ չ'լինին իրանց գործերի և խօսքերի մէջ, լար-
գանք և պատկառանք ունենան դէպի իրանց մեծերը,
ընկերները և իրանց կատարած գործի վերայ զգուշ լի-
նին ու աշխատասէր, հնազանդ, խոնարհ և կանոնաւոր
կետնք ունենան, Դաստիարակներն իրանց այսպի-
սի ընթացքով երեխաների համար կ'ստեղծեն կատա-
րեալ կեանք, լի ուրախութեամբ, քաղցրութեամբ և
ազնիւ բարեկամներով։ Խոկ սորա հակառակ այն ծնող-
ները և կամ դաստիարակները, որոնք լիշեալ ախտերը
փոխանակ դարմանելու և բուժելու, իրանց անփութու-
թեամբ աւելի խնամում և աճեցնում են մանկանց
սրտի մէջ, ալդպիսիները կեանք ստեղծելու փոխանակ,
տանջանք և միայն դառն տանջանք են պատրաստում
թէ իրանց և թէ իրանց զաւակների համար։

Արօակ բահ. Մինասեանց

